— Գիտեք, որ այնտեղ կյանքը խիստ ծանր է, նույնիսկ առողջների համար: Իսկ ձեր ամուսինը «ախտի» է: Նա չի դիմանա: Կմեռնի մի տեղ վեր ընկած և նրան էլ չեք տեսնի: Իսկ մի ուրիշի, կարծեմ, դուք չեք դոնի: Եղեք խոհեմ, պատմեցեք, ինչ գիտեք, և մենք իսկույն կվերադարձնենք նրան:

Կմեռնի՛ մի տեղ վեր ընկած... Ներո՛ղ Պեպալի: Եվ ասվածը գիտեր, ինչ մահով... Քրոջս պատնեցին, մարդուս պատնում են, կմնամ մենակ, բոլորովին մենակ: Մեն-մենակ մինչև մահը... Բայց ես կարող էի փրկել նրան, նրան կվերադարձնեին,... Սակայն ի՞նչ դնով: Ոչ, այդ արդեն ես չէի լինի, այդ արդեն հայրիկը չէր լինի:

Ջմաոնեց ոչինչ, կրակ լինչ-ոլ մի տեղ աքսորականների անթիվ խմբերից մեկում: Իսկ չուտով լուր եկավ, որ Պետրին էլ մեռել է Լենհասոնում:

Լիդա

Երբ առաջին անգամ եկա Բակուի մոտ, տանը մեկն Իոշեկն էր և մի փոքրիկ արարած աշխույժ աչքերով, որի անունը Լիդա էր: Նա դեռևս փոքրիկ աղջկա տպավորություն էր թողնում: Նա հետաքրքրությամբ աչքերը հառեց մի րուբլի, բան երևույթին չատ դոհ լինելով, որ բնակարանում մի նոր գվարճություն երևաց, որով նա կարող է զբաղվել մի առ ժամանակ:

Մենք չուտով բարեկամացանք: Պարզվեց, որ այդ փոքրիկ աղջիկը չուտով 19 տարեկան կլինի, որ նա Իոշեկի քեռին է, իսկ ապրանումն է Պլախովա, որը բոլորովին հարմար չէ նրան[1]), և

---

[1]) Պլախա — չեխերեն նշանակում է «երկչոտ»: (Մանոթ. խմբ.):

ինչ-որ հիվանդություն, որ ես ինձ համար չէի ճանաչում, ինչ-որ ուրիշ մարդ էի, որ ինձ համար անծանոթ էր

Եվ այսպես նա հեռվեան դարձավ իմ կապարտը:

Լիլան ամեն ինչ անում էր հաճույքով, առանձնապես չհետաքրքրվելով, թե ինչ է նշանակում դա և ինչի համար է կարևոր: Դա ինչ-որ նոր բան էր, հետաքրքրական, այնպիսին, որ ամեն մարդ չի կարող անել, որը նման է արվածի: Եվ այդ բավական էր նրան:

Առայժմ նա ոչ մի լուրջ բանի չէր մտածում, ես էլ չէի ուզում որևէ բան հարցրնել նրան: Ձերբակալության դեպքում անհեղյակությունը նրա համար ամեն լավ պաշտպանություն կլիներ, քան «մեղքի» ապացուցումը:

Բայց Լիլան դնալով ավելի էր խրանում աշխատանքի մեջ: Նրան արդեն կարելի էր տալ ավելի լուրջ հանձնարարություններ, քան վարել Ելենկնեի մոտ և հարցրնել նրանց ինչ-որ մանրուք: Արդեն ժամանակն էր, որ նա իմանար, թե ինչի համար ենք աշխատում: Եվ ես սկսեցի բացատրել: Դրանք դասեր էին, ամենախելացի դասեր: Լիլան սովորում էր չանսախրությամբ և հաճույքով: Ար-

տաքսատ նա մնացել էր միշտ նույն ոտ-
քաթ, թեթևամիտ և փոքր ինչ կռվարար
աղջիկը, բայց լրակատամ նա արդեն
ուրիշ էր: Նա մտածում էր: Ել աճում:

Ընդհատակյա աշխատանքի ընթաց-
քում Լիդան ծանոթացավ Մերեկի հետ:
Սա ուներ արդեն ընդհատակյա աշխատան-
քի որոշ փորձ, որի մասին նա պիտեր հե-
տաքրքրական ձևով պատմել: Դա տպա-
վորություն էր գործում Լիդայի վրա:
Նա չկարողացավ տեսնել Մերեկի խակա-
կան էությունը, բայց չէ՞ որ ես ինքս էլ
չկարողացա տեսնել այն: Այսպես, թե
այնպես, նրա երևութական դաղափարա-
կանությունը և մտանակցությունը ընդ-
հատակին հարկավոր էր ներշնչում Լիդա-
յին: Մերեկը գործակ նրա համար ավելի
մոտիկ, քան մյուս ծանոթ երիտասարդ-
ները:

Լիդան աճում էր օրեցօր: 1942 թվի
սկզբին անձնականորեն, հետաքրքրությունից
դրդված խոսեց պարտիայի մեջ մտնելու
մասին: Ես երբեք նրան այդքան հետա-
քրքիր չէի տեսել: Ոչ մի բանի նա այդքան
լրջությամբ չէր վերաբերվել մինչև այդ
օր: Ես տեսայինն տատանվում էի, դեռ-

և պատրաստում և մտածում էր նրան: 1942 թվի փետրվարին նա ընդունվեց պարտեզի մեջ անմիջականորեն կենտրոնական կոմիտեի կոչով: Ու-շ դիշերով տուն էինք վերադառնում, ամպրոպը լեզվանի Լիդան լուռ էր: Դուշում, տանից ոչ հեռու, նա հանկարծ կանգ առավ և կամաց, շատ կամաց ձայնով, ոյնպես, որ լսել էր ձյան փոթիլնեի շշյունը, ասաց:

— Ես գիտեմ, որ իմ կյանքի ամենակարևոր օրն էր սա: Այլևս ես ինձ չեմ պատկանում: Պատրաստ եմ, որ հետաքրքիր չեմ անի, ինչ էլ որ պատահի:

Պատահեց շատ բան: Եվ Լիդան պահեց իր խոսքը:

Նա պատասխանատու կոչ էր պահպանում կենտրոնական կոմիտեի անդամների մեջ: Նրան հանձնարարում էին ամենավտանգավոր առաջադրանքները — վերականգնել խախտված կապերը և նախապաշարել փոանդի մեջ դավադրամարդկանց: Երբ ժամադրավայրին ապատնում էր անխուսափելի ձախողում, Լիդան գնում էր այնտեղ և տղտակելով անցնում օձաձուկի նման: Նա այդ անում էր, ինչ-

պես և առաջ, ժամուհ, զվարթ անհոգութեամբ, որի տակ թաքնված էր իր պատասխանատուութեան զգաստկցումը:

Նրան ձերբակալելեն մեղնից մի տարի հետո: Մթնեկի խոստովանութեանները նրա վրա դարձրին գեստապոյականների ուշադրութեանը, և չտեսով առանց զըժվարութեան պարզվեց, որ նա օգնել է քոջը և նրա ամուսնուն փախչել և անցնել ընդհատակ: Գրանը ցնցելով, Լիլան սկսեց խաղալ թեթևամիտ աղջկա դերը, որը զարմանալի անգամ չունի որևէ արդելված գործի կամ նրա հետ կապված հետևանքների մասին:

Նա շատ բան գիտեր և ոչինչ չմատնեց: Դեռ ավելին. նա չդադարեց աշխատել նաև բանտում: Փոխվել էր երաժրութեանը, փոխվել էին աշխատանքի մեթոդները, փոխվել էին առաջադրանքները: Բայց մնացել էր պարտքի անգամի պարտականութեանը. երբե՛ք թևաթափ չլինել: Բոլոր առաջադրանքները նա կատարում էր անձնուրաց, արագ և ճշդիվ: Եթե անհրաժեշտ էր դուրս պրծնել դըժվար դրութեանից և փրկել ազատ մնացած մեկնումեկին, Լիլան անմեղ երե-

վաստիակ էր վրա էր վերցնում ուրիշի «մեղքը»: Պանկրացում նա դարձավ մի-ջանցքապահ, և տասնյակներով բոլոր-վին անծանոթ մարդիկ պարտական են նրան, որ խուսափել են ձերբակալութ-նից: Մեկն մի տարի հետո բանտապահ-ների կողմից պատահմամբ բռնված մի երիտասարդ վերջ դրավ նրա «կարիերային»:

Այժմ Լիդան մեզ հետ միասին կենա Գերմանիա գաան: Նա միակն է մեր խըմ-բից, որը թերևս հույս ունի ապրելու մինչև պատերազմի օրերը: Երբ մենք, ամպագնեցա, կենդանի չենք լինի արդեն, աշխատեցեք, որ նա կորած չլինի պար-տիայի համար: Նա երիտասարդ է: Դեռ շատ պետք է սովորի: Սովորեցրեք նրան, պահպանեցեք նրան յճացումից: Ուղղու-թյուն տվեք նրան: Մի թողեք մեծամտա-նա կամ հանգստանա ձեռք բերվածով: Նա իրեն լավ ցույց տվեց ամենածանր ժամանակը: Անցնելով կրակի միջից, նա ցույց տվեց, որ ամուր մետաղից է ձուլ-վածը:

Իմ գեստապոյականը

Սա արդեն մարդ չէ, այլ պաճուճապատանք, բայց ոչ անհետաքրքիր և փոքր ինչ ավելի խոշոր մյուսներից:

Երբ մոտ տաս տարի առաջ, նստած «Ֆլորա» կաֆեում պատրաստվում էինք մեռատարբամով թխկացնել սեղանին և կանչել «Պանե վրխնի[1]), ստացե՛ք», ձեր կողքին ցցվում էր բարձրահասակ, լղար, ևազգեստ մի մարդ: Անշշուկ, ասես ջրաթեղ, սահեյով սեղաններն ի պռանքով, նա մի ակնթարթում գրում էր հաշիվը: Նրա շարժուձևերն արագ էին և անաղմուկ, աչքերը՝ արագաշարժ և դիշատիչ, այդ նկատում էին բոլորը: Նա ինքն էր հրամայում մատուցողներին. «Երրորդ սեղանը — մի սուրճ կաթով», «Չախակտմը պատուհանի մոտ — նախաճաշ և «Լիդովե նոմիներ»: Հյուրերը նրան համարում էին յուղ օֆիցիանտ, իսկ պաշտոնակիցները — յուղ տղա:

Այն ժամանակ ես դեռ նրան չէի ճանաչում, ինչպես հարկն է: Մենք խոսա-

---

[1]) Վրխնի — ավար մատուցող: (Ծանոթ. խմբ.):

Կանի պես ծանրաթափանք չաս ավելի ուշ, Ելենեկների տանը, երբ նա մատիտի փոխարեն ձեռքին ուներ ատրճանակ, և ցույց տալով ինձ վրա, ասում էր.

— Սա է ինձ ամենից ավելի հետաքրքրում:

Ճշմարիտն ասած, մենք երկուսս էլ հետո հետաքրքրություն ցույց տվինք իրար հանդեպ:

Նա ամենևին հիմար մարդ չէր և մյուս դետատպյականներից պահպանվում էր նրանով, որ կարդացած էր դրախ ընկնել, թե ով ինչ մարդ է: Գաղտնի ոստիկանության մեջ նա անվտանգ շատ աստղ կլիներ: Գողերը և մարդասպանները, ապրատակարդացյացած մթնոլորտ մարդիկ, հավանաբար, չէին ատամնվի խոստովանելու նրան. նրանք բերին էլ մի հատ ունեին — վրդովել երեկոյ կաշին:

Բայց նման պրիմիտիվ մարմնավաճառների հետ քաղաքական ոստիկանության գործ է դարձ ունենում: Գեստապոյում ոստիկանի խորամանկությունը ընդհատվում է ոչ միայն կալանավորի խորամանկության հետ: Նրա դեմ կանգնած է անհա-

մեծաս ավելի մեծ ուժ. բանաստեղծական համոզմունքները, իր պատկանած կուսակցության իմաստությունը: Իսկ դրա դեմ մեկի խորամանկությամբ և ծեծով շատ բան չես անի:

Հասաստան համոզմունքներ չուներ «իմ» դեսպոտականը, ինչպես չունեին մյուս բոլոր դեսպոտականները: Իսկ եթե մեկն ու մեկն ուներ համոզմունքներ, ապա դրանք զոհաբերված էին հիմարության, ոչ թե խելքի հետ, ոչ էլ թեորիական պատրաստության և մարդկանց ճանաչելու հետ: Եվ եթե Պրոտայի դեսպոտն ընդհանուր առմամբ հավատքով էր պոծում, ապա միայն այն պատճառով, որ մեր պայքարը չափազանց երկարաձգվեց և խիստ նեղ էր նրա տարածությունը: Մենք ունեինք միայն Պրոտյան, Պրոտյան և էլի՛ Պրոտյան, որոնք քեզ ճանաչում է քարոզի կետը և որոնք թշնամին կարող է կենտրոնացնել պրովոկատորների մի ամբողջ ոհմակ: Բայց և այնպես մենք դիմացանք տարիներ շարունակ, և կան ընկերներ, որոնք դեռևս հինդ տարի տարում են ընդհատակում, և դեսպոտն էլ կարողացել ձեռք զցել նրանց:

Դրա պատճառն այն է, որ մենք շատ բան ենք սովորել: Բայց և այն պատճառով, որ թշնամին թեև ուժեղ է ու խորամանկ, ուրիշ մեթոդներ չգիտե, բացի ոչնչացումից:

II—A—I բաժնում երեք մարդ համարվում են կոմսոմոլասանների առանձնապես դաժան թշնամիները և կրում են սևախոտակ-կարմրատուկն ժապավենները «նեռքին թշնամու դեմ մղված պայքարում մատուցած ծառայությունների համար»: Դրանք են՝ Ֆրիդրիխը, Զանդերը և «իմ» դեսուսպոյականը՝ Իոզեֆ Բեմը: Նայիոնալ-սոցիալիզմի մասին նրանք քիչ են խոսում և նրանք շատ բան չգիտեն: Նրանք պայքարում են ոչ թե քաղաքական մի գաղափարի համար, այլ երեք երեսից համար: Եվ ըստ որում ամեն մեկին իր ձևով:

Զանդերը միտք մի մարդուկ է, մարձոս, չար բնավորությամբ: Նա մյուսներից յուր գիտե օգտագործել ոստիկանական հնարքները, բայց ավելի ճարպար է ֆինանսական գործարքների մեջ: Մի անգամ նրան Պրադայից տեղափոխեցին Բեռլին, բայց մի քանի ամիս

անդ նա ապերախտ իրեն տանել առաջվա տեղը: Երրորդ կայարանի մայրաքաղաքում ծառայությունը նրա համար ինչեցում էր... Գաղութային պաշտոնյան Աֆրիկայի խորքերում... կամ Պրադայում ավելի մեծ իշխանություն ունի, քան կենտրոնում և ավելի մեծ հնարավորություն պարարտացնելու իր բանկային հաշիվը: Զանդերը չանասեր է, հաճախ, իր եռանդը ցույց տալու համար, նա հարցաքննում է նույնիսկ ճաշի ժամերին: Այդ նրան անհրաժեշտ է, որպեսզի ավելի լավ քողարկի սեփական օգտի եռանդը: Վա՛յ նրան, ով կընկնի նրա ձեռքը, բայց էլ ավելի վա՛յ նրան, ով տանը ունի խնայտպական գրքույկ կամ արժեթղթեր: Այդ թղթերի տերը պետք է չքանա երկրի երեսից ամենակարճ միջոցում, քանզի խնայտպական գրքույկը և արժեթղթերը Զանդերը սիրում է կրքոտ կերպով: Նա համարվում է ամենից ընդունակը դեստապյականների մեջ... այդ գծով: Ներանից տարբերվելով, նրա չեխ օգնականը՝ Սմոյան հանդիսանում է ջենտլմեն կոդոպտիչի տիպար. խլելով դրամը, նա չի դավում կյանքի դեմ:

Ֆրեդրիխը — երկար բարակ, հրուշ, թխագույն դեմքով մի ոխ, չար աչքերով և չարախինդ ծիծաղով: Նա Զելսոլմա-կից է եկել դեռևս 1937 թվին, որպես դեսպանության ատենո և մասնակցել է դեմ-մանոյի հակաֆաշիստ էմիգրանտների ապատուժյուններին: Նա սիրում է մարդ-կանց միայն երբ նրանք մեռած են: Ֆրե-դրիխի համար անմեղներ չկան: Սմեն ոք, որ անցնում է նրա առանձնասենյակի չեմքը, մեղավոր է: Ֆրեդրիխը սիրում է հարցրել կանանց, որ նրանց ամուսին-ներր մեռել են համակենտրոնացման ճամ-բարում կամ թե մահապարժ են են-թարկված: Երբեմն նա արկղից հանում է յոթ փոքր ոճյունասրտեր և ցույց տա-լիս հարցաքննվողներին:

— Սրա յոթ հոգուն ջնջել եմ անխո-կան ձեռքով: Դու կլինես ութերորդը:

(Սյժմ արդեն ութ տախտ են):

Ֆրեդրիխը սիրում է թղթատել հին դրծերը և բամասիոնաթյամբ արտասա-նում է, հանդիսիրով, մահապարժ են-թարկվածների անունները. «Լուծարքի ենթարկված, լուծարքի ենթարկվա՛ծ»:

Առանձին բամասիոնաթյամբ նա ասի-ջում է կանանց:

Նրա կյանքն է պերճանքը: Եթե ուներ մանուֆակտուրայի վաճառատուն կամ պետության կահավորված բնակարան, դա պատրաստի կարապացնի ձեր մահը: Հերթը է Յրիստիխի մասին:

Նրա օգնականն է հեն Նեպլեը, սա հասակով չաճ է նրանից կես գլխով: Ուրիշ տարբերություն նրանց մեջ չկա:

Բեմն առանձնապես մեծ հակում չունի ո՛չ դրամի, ո՛չ մեռելների հանդեպ, քեև վերջիններիս թվելը նրա հաշվում պակաս չէր, քան Զանդերի կամ Յրիստիխի մոտ: Ի բեև նա բախտախնդիր է և ուզում է «մարդ դառնալ»: Գեսատորում նա արդեն վարժ է աշխատում. եղել է մատուցող «Նապոլեոն» կաֆեում, որտեղ տեղի էին ունենում Բերանի[1]) կոմունակիցների գաղտնի հանդիպումները, և այն, ինչ չէր պետության Հիմնարին, տեղ էր հասցնում Բեմը: Բայց մի՞թե այդ կարելի է համեմատել մարդասպանության հետ, մարդկանց կյանքն ու մահը

---

1) Բերան—Ջնխական պատմաննտ նախկին գնդապետ, «պրոնկուրատոր» մարիոնետային կառավարության վարչապետ, Ֆաշիստ: (Թանող. խմբ.):

ունօրինեալ, ամբողջ ընտանիքների բախտը որոշելու հնարավորության հետ:

Բեմը ստեղծել էր սպրովկատորների ամենայն ցանց: Նա որսկան հների մի ահագին ոհմակ ունեցող որսորդ էր: Եվ նա որսում էր: Հաճախ պարզապես որսորդության սիրուց: Հարցաքննությունը— դա արդեն ձանձրալի զբաղմունք էր: Նրա գլխավոր բավականությունն էր ներթափանցել և դիտել նրա վճռին սպասող մարդկանց:

Մի անգամ Պրադայում նա ձերբակալեց երկու հարյուրից ավելի տրամվայի, ավտոբուսի և տրոլեյբուսի վարորդների և կոնդուկտորներ և քշեց նրանց ոստիկանների վրայով, կասեցնելով տրանսպորտը և խանգարելով փողոցային երթևեկությունը: Հետո նա ազատեց մարդկանց, պարծենալով, որ հարյուր հոգուն բնտանիքներում իրեն կանվանեն «բարի»:

Բեմը սովորաբար վարում էր մասամբ, բայց իրենց քաղաքական նշանակությամբ մանր դործեր: Եա նրան բաժին ընկավ պատահմամբ և բացառությունն էր կանոնում:

— Դու իմ խոշորագույն գործն ես,— անկեղծորեն ասում էր ինձ և շատ էր հպարտանում, որ իմ գործն առհասարակ համարում էր ամենախոշորներից մեկը: Հնարավոր է, որ այդ հանգամանքն իսկ երկարացրեց իմ կյանքը:

Մենք առանց հոգնելու ասում էինք մեկը մյուսին, սակայն, դա փակ աչքերով ասված սուտ չէր: Ես միշտ պիտեի, թե երբ է նա ասում, իսկ նա իմ նկատմամբ միայն երբեմն: Երբ սուտն արդեն ակնհայտ էր դառնում երկուսիս համար էլ, մենք յուր համաձայնությամբ անցնում էինք ուրիշ նյութի: Ես կարծում եմ, որ նրա համար ոչ այնքան կարևոր էր հավատալ փաստերը, որքան «լավ կատարել» իր «խոշորագույն գործը»:

Գավազանն ու չղթաները նա չէր համարում ներգործության միակ միջոցներ: Առհասարակ նա ավելի հոժարությամբ համարում կամ սպառնում էր, նայած թե ինչպես էր գնահատում «իր» մարդուն: Ինձ նա երբեք չի ծեծել, բացի առաջին դիշերվանից, բայց հաճախ այդ նպատակի համար հանձնել է մի ուրիշի:

Նա անկասկած ավելի ուշադրավ և

թարմ էր մյուս գնումներից: Նա ամեն հարցում ֆանտազիա ուներ և միտք օգտագործել ոչն: Երբեմն նա ինձ ասում էր քաղաք և մենք նստում էինք մի վագրի ճաշարանում այդտեղ մեջ և դնում մեր կոլքում հասնի մարդկային հոգը:

— Ահա դու ձերբակալված ես, — մխիթարում էր ինձ, — խակ նայի՛ր, տխմա՞ է որևէ բան շուրջը: Մարդիկ քայլում են առանց պես, ծխում են, դեռ ու դեն մտածում, և ամեն ինչ գնում է իր կարգով, կարծես թե դու խելի էլ չես եղել: Այդ անցորդների մեջ կան և քո ընթերցողները: Գլխի՞ կարծում ես, որ քո պատճառով նրանց երեսին ավելացել է մի մի բարակ ինճիլ:

Մի անգամ շատ ժամեր անդ հաքցաքննությունից հետո երևելյան նա ինձ նստեցրեց մեքենա և տարավ Պրադոյի միջով տարավ Գրադչանկ[1]):

— Ես գիտեմ, դու սիրում ես Պրադան: Նայի՛ր նրան: Մի՞թե սիրած չէ ու-

---

[1]) Գրադչանկի—Պրադոյի լեհական ասյոնը: (Մանոթ. խմբ.):

պատի վերտաղանդը: Ինչ լավն է նա: Ես կամեցա այդպես, երբ դա արդեն չեր լինի...

Նա ճարտար գործիչ էր: Ամառանային երեկոյան, մոտիկ աշնան ընկած հարած, Պրոպան կատարելոն մշուշի մեջ էր, նման հատուցյալ խորհրդի, արբեցնող ինչպես գինի. ուզում էր նայել նրան հավիտյան... Ես պատասխանեցի.

— Ես ամեն կղեկիցկանոս, երբ դա չեք լինի:

Նա քմծիծաղ տվեց, ոչ հարմարին, այլ մի տեսակ մտածկոտ, և ասաց.

— Դա ցինիկ է:

Այնուհետև նա երեսին հիշում էր վերջին այդ խոսակցությունը.

— Երբ դա չեք լինի... Նշանակում է, դա էլի չեր հավատում մեր հաղթանակին:

Նա ասես էր այդ հարցը, որովհետև ինքն էլ չէր հավատում: Ես նա մի անգամ ուշադիր չեց այն, ինչ ասում էր Սոֆեական Միության ուժի և անպարտելիության մասին: Ի դեպ ասեմ, որ դա իմ վերջին հարցաքննությունից մեկն էր:

Դիմացի կամերայի դռան մոտ կախված են շալվարակապեր: Սովորական տրամաբրա շալվարակապեր: Մի առարկա, որ ես երբեք չեմ սիրել: Այժմ ես բերկրանքով եմ նայում նրանց սովն անգամ, երբ բղխում է մեր դռնից: Այդ շալվարակապերում հույսի մի նշույլ կա: Երբ ընկնում ես բանտ, ուր հավանաբար քեզ չուտով ծեծամահ կանեն, առաջին հերթին քեզնից վերցնում են վոլկաները, գոտին և շալվարակապերը, որպեսզի դու չկախես (թեև հիանալի կարելի է կախվել սովոնի օգնությամբ): Մահվան այդ դարձվածքները պահվում են բանտի դրամեներում մինչև այն ժամանակ, երբ պետական ապարատը, որևէցե մի Նեմեզիդա[1]) կվճռի, որ անհրաժեշտ է ուղարկել քեզ հարկադիր աշխատանքների, համակենտրոնացման ճամբար կամ կախաղան: Այն

---

[1]) Նեմեզիտա կամ Նեմեսիս—հունական աստվածուհին, որը պատժում է հանցագործությունների համար: (Թանոթ. խմբ.):

ժամանակ քեզ ուտելիք են պատրաստում և պատվարժան տեսքով տալիս են վտակապը և շալվարդակալները: Բայց այդ իրերը չէ կարելի տանել կամերա: Դրանք կախում են մխիթարչում, դուռ մոտ կամ դիմացի ճաղերին: Սխալով նրանք մնում են կախված մինչև քո մեկնումը, որպես անուտու նշան այն բանի, որ կամերայի բնակիչներից մեկը պատրաստվում է ընկնել հետս ճամփա:

Հանդիպակաց դուռն մոտ շալվարակապերը երևացին հենց այն օրը, երբ ես իմացա Գուսանինայի բախտի մասին: Դիմացի կամերայի ընկերուհիը հարկադիր աշխատանքների են ուղարկում նույն խմբի հետ, որի մեջ է Գուսանան: Տրանսպորտը դեռ չի մեկնել: Անպատեհությունն կասեցել է—ասում են,—որովհետև գնալու վայրը ամրակոծվել է այնպես, որ ոչինչ չի մնացել: (Սա արդեն վատ չէ): Ե՞րբ կմեկնի, ոչ ոքի հայտնի չէ: Գուցե այսօր երեկո, գուցե վաղը, գուցե մեկ կամ երկու շաբաթից: Դիմացի շալվարակապերը դեռ կախված են: Եվ ես գիտեմ, քանի նրանք այստեղ են, Գուսանին Պրադայում է: Ուստի և ես նայում եմ

չարխարակատերին պիտի և մանրամասնություն, ինչպես գաստրոնոմի բարեկամներին: Նա չահել է արդեն մեկ, երկու, երեք օր... Ո՞վ գիտե, ինչ կարող է տալ այդ: Զի՞ վրկի արդյոք նրան ուշացման մի ամենապզտ օրը:

Մենք ցույցս ավարտել էինք արդեն: Ամբոխ, մի ամբոխ առաջ, մի ամբոխ մեզ մոտ էինք և մոտենում էինք մեր վարպետ օրհնած մասին, դրանումն է մեր հույսը: Քա բախտը վճռված է, վաղը չէ մյուս օրը դա մահապարտի կենդանությունն է... Բայց, է՛հ, ո՞վ գիտե, ինչ կարող է պատահել վաղը, մի բան էլ ապրեա մինչև վաղը, վաղն ամեն ինչ կարող է փոխվել, շատկն ամեն ինչ ակնթարթում է... և ո՞վ գիտե, ինչ կարող է պատահել վաղը:

Գալիս է վաղը, և էլի, և էլի վաղը, հազարամյակ մարդիկ կրծանավում են, հազարամյակների համար այդտեղ «վաղը» չկա, բայց պատմածներն ապրում են մեկ հույսով — վաղը, ո՞վ գիտե, ինչ կլինի վաղը...

Այդպիսի պրամատրությունը ծնունդ է տալիս ամենամոմասուրի լուրերի,

ամեն չորսի հայտնում է պերպետուում շարժման նոր դաշտերի պատերազմի մասին, ամենքը հաժարությամբ բնութագում են սրանցից մեկը, նա անցնում է բերանից-բերան և բանում տարածում է նոր անեծքա, որին ամենքն ուզում են հավատալ: Ես պատքարում եմ դրա դեմ, պատկերը եմ անում անհին հայերը — նրանք չեն սխալվում, այլ մեկն իրավունք է տալիս ինձ ասելու, այլ ճշմարտությամբ, անաչառությամբ հայի համար հավատալու է, բայց եմ մեջ էլ է տարում այն հույսը, որ մեն մի համի օր կարող է դառնալ վճռական, որ իմ պաշտպանած մի ամերիկան օրը կարող է այդ կացնել ինձ դեմ հանած մեհման վրայով դեպի կյանքը, որից այնքան չեն ուզում հրաժարվել:

Այնքան քիչ են մարդկային կյանքի օրերը, իսկ ահա ուզում են, որ նրանք առհեն ավելի արագ, ավելի արագ, ավելի արագ... Արագհոտ, անդադար, անդամատրելի կերպով մեզ ծերության

մտնելու ժամանակը դառնում է մեր բարեկամը: Տարօրինակ էջ արդյոք:

Վարիա օրը դարձավ երեկ: Վաղը էլ մյուս օրը — այսօր, և նմանապես դարձյալ անցյալ:

Շարժարկուները դեռ կախված են դռան մոտ:

ԳԼՈՒԽ VI

ՅՕԳՆՈՑ ԹՂԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1943 թվի մայիսի 27:

Ահա ինչ եղավ ճիշտ մեկ տարի առաջ:

Հարցաքննությունից ինձ տարան ներքև՝ «կինո»: Այդպես էր ամենօրյա մարշրուտը պետչեկ պահանջում. կեսօրին ներքև ճաշի, որ բերում էին Պանկրացից, իսկ ճաշից հետո — ես դեպի էորտոր-հարկը՝ «Զորահարկությանոցը»: Բայց այդօրը մենք էլ չդարձրացանք վերև:

Նստած ուտում ենք: Նստարանների վրա նեղ ածք է, կալանավորները մեծ եռանդով գործի են դրել ծնոտներն ու ղդալները: Աշտարակ ամեն ինչ համայնյա մարդավարի է: Բայց եթե հանկարծ

կամաց պառնային, ամբոխ վազը մեռած կլիներն, հոգի ամաններին դիպչող զգալներն ինչպես կխեղդվեր ահռելի ճաշասենի և ծնոտների չար կրճտոցի մեջ: Սակայն ոչ ոք ոչինչ չի նախատրամ: Յուրաքանչյուրն ուտում է ախորժակով, հուսալով պահպանել իր կյանքն էլի մի քանի շաբաթ, ամիսներ, տարիներ:

Թխում էր, մի քիչ եղանակ է, հանկարծ վշեց սաստիկ քամի և գարձյալ խառնաթխմեր: Բայց հակիճների դեմքից կարելի է կռահել, որ մի քանի պատահել է: Իսկ մի քանի բոպե անց էլ ամեն պարզ մի նշան. մեզ կանչում են և շարքի են կանգնեցնում Պանկրատ ուղարկելու համար: Ճաշից հետո՛: Ջեղած դեմք է դա: Երևակայեցեք, որ ձեր գլուխն ուզել է հարցներից, որոնց պատասխան. տալ չի կարելի, և ահա ձեզ հանդիսաս են թխելում մի ամբողջ կես օր — մի՛ թե դա սուրճ պրոմուխյան չէ: Այսպես էլ թխում էր մեզ: Բայց այսպես չէր:

Միջանցքում հանդիպում ենք գեներալ Էլիաշին[1]): Նրա տեսքը ապշեցուցիչ

---

[1]) Գեներալ Էլիաշ—մի ժամանակ «պրոմեխոտրապ» մարմնավորային կառավարության վար-

էր. Նկատեցի ինձ, նա, Էնայած շուրջը վխտացող հակիճներին, կարողացավ շշնջալ։

— Պաշարողական դրության։

Ամենակարևոր նորությունները հասցնելու համար կարանավորի տրամադրության տակ կա մեկն վարչության մոտոցիկլը. Էլեանին այլևս չի հաջողվում պատահականորեն մի հայացք էլ հաջողվում գեներալին։

Պանիրացի բանտապահները զարմանում են մեր վարմաժամ վերաբերմունքի վրա։ Նա, ով ինձ տանում է կամերա, ավելի վատահություն է ներշնչում, քան մյուսները։ Զգիտեմ, ինչ տեսակի մարդ է նա, բայց նորությունը հայտնում եմ նրան։ Նա բացատրեր օրորում է գլուխը։ Նրան ոչինչ հայտնի չէ։ Երևի, լավ չեմ լսել։ Հնարավոր է։ Դա հանգստացնում է ինձ։ Իսկ երեկոյան նա պարիս է ասում.

— Դուք իրավացի էիք։ Մահափոր Հեյդրիխ[1]) գեմ։ Ծանր վիրավոր է։

չապետը։ 1942 թվին մահապատժի ենթարկվեց գերմանացիների կողմից (Ծանոթ. խմբ.)։

[1]) Հեյդրիխ—Չեխայի և Մորավիայի հիտլերական «նահապետը»։ (Ծանոթ. խմբ.)։

Պրահայում պաշտպանական դիրքեր էին:

Հաջորդ օրը հարցաքննության ուղարկեցին առանց մեզ շարքի են կանգնեցնում ներքևի մի ջանգրում: Մեզ հետ այսօր ընկեր Վիկտոր Սինեկը, կոմունիստական պարտիայի կենտրոնական կոմիտեի մերձին կենդանի մնացած անդամը, ձերբակալված 1941 թվի մեծերին: Երկարահասակ էսեսական ղեկավարը նրա քթի առաջ թափ է տալիս թղթի մի թերթիկ, որի վրա նոշով տառերով տպված է.

«Entlassungsbefehl» [1]):

Էսեսականը կրճատացնում է առաջները.

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես, Չհուդ, հասար օրիդ: Ազատ արձակման հրաման: Դուրս կգաս, և... չի՛կ:

Եվ ձեռքն անց է կացնում վզի վրայով, ցույց տալով Վիկտորին, ինչպես է թռչելու նրա գլուխը: 1941 թվի պաշտպանական դրության ժամանակ առաջինը մահապատժի ենթարկվեց Օտտո Սինեկը: Վիկտորը, նրա եղբայրը 1942 թվի պա-

---

[2]) «Ազատ արձակման հրաման» (գերմ.):

չարտրական դրության առաջին զոհն է: Նրան տանում են Մատուտաուզեն: Գնդապետության, ինչպես նրբանկատորեն արտահայտում են նրանք:

Ճանապարհը Պանկրացից Պետչեկ պարարը և վերադարձը զորզոթա է դառնում կայանամորների համար: Էսեսականները «վրեժ են առնում» Հեյդրիխի համար: Հազիվ է մեքենան մի կիլոմետր անցել, և ահա մի տասնյակից ավելի կայանամորների երեսները ջարդված են և արյունաշաղախ:

Ինձ հետ գնալը ձեռնտու է, — իմ երկար մրուքը պրոֆում է էսեսականների ուշադրությունը, և նրանք, ամեն կերպ իրար դեբապանցելով, գվարճանում են նրա վրա: Մրուքից բռնելը, ինչպես կաշվե վոկից, — նրանց ամենասիրած գվարճություններից մեկն է: Ինձ համար դա մատ նախատապատրաստություն չէ հարցաքննության, որը համապատասխանում է նոր կացությանը և չարունակ վերջանում է բարի ճանապարհ ես խրատով:

— Վադը խելքի չգաք, կդնդակահարեմք:

Դա ինձ ամենևին չի վախեցնում:

Երեկո չի անցնում, լսում ես, ինչպես նեղքևի միջանցքում կանչում են կալանավորների պատանիները: Հիսուն, հարյուր, երկու հարյուր մարդ, շղթայակապ, բարձում են մեքենաների վրա, մարթեթու ասհմանված անասունների նման, և տանում քաղաքից դուրս մասայական գնդակահարության: Ինչ կայ այդ մարդկանց հանցանքը: Ամենից առաջ այն, որ նրանք ոչ մի բանում հանցավոր չեն: Նրանց ձերբակալել են ինչ-որ դատարկ մի ասիթով, ոչ մի լուրջ բան նրանք չգիտեն, նրանց հարցաքննելու բան էլ չկա, իսկ այդ նշանակում է, որ նրանք միանգամայն պիտանի են գնդակահարության համար: Երգիծական տանջավորը, որ մի ընկերը կարդացել էր ինձ մեքենաների, տալին էր բանտ էր բերել մահապարտից երկու տող առաջ: Հիմա նրանց մահապարտ են նշանակում... տեսքնական ակտերը պատրաստելու համար: Կես տող առաջ ձերբակալել էին մի կնոջ՝ թուղթկնեք տարածելու կասկածով: Նա ոչինչ չէր խոստովանել: Եվ ահա այժմ բանում են նրա քույրերին և եղբայրներին, քույրերի ամուսիններին

և երբայրների կանանց և բոլորին մահապարժ են ենթարկում, որովհետև ամբողջ ընտանիքներով բնակվելը պաշտպանական դրության նշանաբաններից մեկն է: Սխրամարտ ձերբակալված փոստային մանր մի ծառայող կանգնած է ներքևում պատի մոտ, սպասելով, որ հիմա իրեն ապտա կարճակեն: Նա լսում է իր ազգանունը և պատասխանում է կանչին: Նրան միացնում են դատապարտյալների շարասյունին, տանում քաղաքից դուրս և գնդակահարում: Հաջորդ օրը պարզվում է, որ պետք է մահապարժ ենթարկվեին նաև պզպանունը կրող մեկ ուրիշին: Այդ ժամանակ գնդակահարում են նաև երկրորդին, և ամեն ինչ կատարյալ է: Արժե՞ ժամանակ վատնել և պարզել մի մարդու ինքնությունը, որին սպանում են: Ինչ հարկ կա դրան, քանի որ խնդիրն այն է, որ պետք է ոչնչացնել մի ամբողջ ժողովուրդ:

Ուշ երեկոյան վերադառնում եմ հարցաքննությունից: Ներքևում պատի մոտ կանգնած է վարպետ Վանչուբան, նրա ոտքերի մոտ իրերի փոքրիկ մի կապոց: Ես

յալ գիտեմ, ինչ է նշանակում այդ: Գիտեմ և նա: Սեղմում ենք իրար ձեռքը:

Բարձրանալով վեր, միջանցքից տեսնում եմ, ինչպես նա կանդնած է դլուխը թեթևակի հակած, և նայում է հեռու, հեռու... կյանքից դենը: Կես ժամից նրան կանչում են...

Մի քանի օր անց նույն պատի մոտ կանգնած է Կարմիր Միլոշը, ձերբակալված դեռևս անցյալ տարվա հոկտեմբերին, ռևոլուցիայի քաջարի զինվոր, չընկճված ո՛չ չարչարանքներով և ո՛չ մեկուսացված կալանքով: Նա ինչ-որ բան է տառամ ուղեկցող պահակին, շուռ գալով դեպի նա ուսի վրայով: Ինձ տեսնելով Միլոշը ժպտում է, գլխով հրաժեշտ է տալիս և չարունակում.

— Ոչինչ չի օգնի ձեզ: Մերոնցից քիչ չեն գոհվի, բայց և այնպես կվարդեն ձեզ:

Էլի մեկ կեսօր: Կանգնած ենք ներքեում՝ պետչեկ պարտատում և ճաշի ենք սպասում: Բերում են էլիաշին: Կանատաները յուրայիր ունի, ժպտալով ցույց է տալիս այն. նոր է կարտացել, իբր թե կապած է եղել մահափորձ կազմակերպողների հետ:

— Փչո՛ւմ — ասում է նա վրդով և սկսում ուտել:

Նա դրա մրա կատակում է նաև երեկոյան, երբ վերադառնում ենք Պանկրաց: Իսկ մի ժամ անց նրան հանում են կամերայից և տանում քաղաքից դուրս:

Դիանների կուլտերն աճում են: Հաշվում են արդեն ոչ տասնյակներով և ո՛չ հարյուրյակներով, այլ հազարներով: Թարմ արյան հոտը գրգռում է երկտոանի գազանների ռունդերը: Նրանք «աշխատում են» առավոտից մինչև ուշ գիշեր, «աշխատում են» նաև կիրակի օրերը: Այժմ նրանք բոլորը պաշտոնական համապատասխան են, դա նրանց տոնն է, ոչընչացման խրախճանքը: Նրանք գեպի մահ են ուղարկում բանվորներին, ուսուցիչներին, դատապարտներին, գրողներին, պաշտոնյաներին: Նրանք բնաջնջում են տղամարդկանց, կանանց, մանուկներին, սպանում են ամբողջ ընտանիքներով, ոչնչացնում են և այրում ամբողջ գյուղեր: Կատարյա մահը ժանտախտի նման չրջապատում է ամբողջ երկրով մեկ և չի խնայում ոչ ոքի:

Իսկ մարդը այդ արհավիրքի մեջ:

Ապրում է:

Անհամատարած է: Բայց ապրում է, ուտում, քնում, սիրում, աշխատում է, մտածում շատ ու շատ բաներէ մասին, որոնք ամենևին չեն կապակցվում մահվան հետ: Համառական է, հոգու խորքում նա պատմ է ճնշող ծանրութեյուն, բայց տանում է այն, առանց կռանալու, առանց վհատվելու:

Ճաշխատական տեսրի բուռն շրջանում «իմ» դեռատարեկանը տարավ ինձ Բրանիկ: Հանիստան երեկոն տոպրված էր յրեներեի և ծաղկաթաղ ակացիաների անուշ բուրմով: Կիրակի էր: Տրամվայի վերջին կայանը տանող խճուղին չէր տեղատրում պրոտանքից քալած վերադարձող մարդկանց արագընթաց հեղեղը: Նրանք ադմկում էին, վխարխ էին, երանութեյամբ խանչացած արևից, շրից, սրտածների դրկախառնութեյունից: Նրանց դեմքերի վրա ես չտեսա մահը, որն ամեն վայրկյան դարանակալ հսկում է նրանց վրա, ընտրելով նորանոր զոհեր: Սահեց ճաղարներ, նրանք վխտում և ցատկոտում էին, չարաճճի և ծիծաղաշարժ: Սահեց ճաղարներ: Բռնեց և դուրս քաշեց նրանցից մեկին, — մնացածները կհա-

վաթսուն երես դրկի, կուշ կգան անկյունում, խոկ մի տան հետ, տեսար, արդեն նորից սկսել են իրենց վտիվտուքը, նորից դեռ ու դեն են ընկնում և ուրախանում կյանքի վրա:

Բարձր արհիսանոցում աշխատից անչատած բանից մարդկային աղմկալի հեղեղն ինձ այնպես անուրախէր, որ սկզբում գուսունցա տեսնելով այդպիսի անհոգ երջանկութիւն:

Բայց ես անհրամարդի էի, բոլորովին անհրամարդի:

Չէ որ իմ տեսած կյանքը, վերջ ի վերջո, նուազնպիսին էր, ինչպես և մեզ մոտ, բանտում. կյանքը ծանր ճնշման տակ, կյա՛նք որ չունում են խեղդել և ոչնչացնել մի տեղում, խոկ նա հարյուրավոր ծիլեր է տրձակում մի այլ տեղ, կյա՛նք, որ պրեղ է մահից: Էլ ի՞նչ գառն բան կա դրանում:

Ես մի՞թե մենք, կամերանների բնակիչներս, որ ապրում ենք որպես մահվան անմիջական հարևաններ, ուրիշ իմաստի՞ն ենք չինված:

Երբեմն պատահում էր, որ հարցաքննութեան գնալիս պահակները քիչ թե

չաո հանդարտ էին պահում իրենց: Փոքրիկ պատուհանից ես տեսնում էի վոլոցնեըը, ցուցափեղկերը, կանանց: Մի անդամ ասացի, արի՛ բախտ փոց անեմ. եթե ճամփին տեսնեմ 9 դույզ սիրունիկ ոտներ, ապա հարցաքննությունից կենդանի կմնաըդառնամ: Ել հաշվում էի, պնդում, համեմատում, ուշադրությամբ ուսումնասիրում ոտների դծերը, հավանում էի և չէի հավանում, անվեզծ ոլորությամբ և բոլորովին էլ ոչ այն պատճառով, թե դրանից է կախված իմ կյանքը:

Սակայրար ուշ էի վերադառնում կամերա: Պեշեկ հայրիկը արդեն սկսում էր հուզվել, երկյուղ կրելով, որ բոլորովին չեմ վերադառնա: Նա դրկում էր ինձ, ես կարճ պատմում էի վերջին նորությունները, հարդրդում, թե էլի ոմն են եղել դնդակահարել, հետո ախորժակով ուտում էինք անոանելի չոր բանջարեղենից բաղկացած ընթրիքը, ձիլ. տալիս մի ուրախ երգ կամ թե շշմելու աոիճան կատարապես զառ էինք խաղում: Այն էլ հենց երեկոյան այն ժամերին, երբ ամեն րոպե մեր կամերայի դուռը կարող

էր բացվել և մոհմանդ պատվիրակը կարող էր մեզնից մեկնումեկին հրամայել.

— Ձած իջի՛ր, իրեղավ, դե՛ շուտ:

Բայց մեզ չէին կանչում: Մենք ոչչ մնայինք այդ զարհուրելի ժամանակը: Այժմ, մտաբերելով այդ օրերը, մենք ինքներս զարմանում ենք մեզ վրա: Ի՞նչ ապշեցուցիչ ձևով է կառուցված մարդը, երբ նա կարողանում է ամեն ամենից անտանելին:

Այդ րոպեները, հարկավ, չէին կարող մեր մեջ չթողնել անջնջելի հետքեր: Համանարար այդ րոպեը պահպանվում է ուղեղի որևէ ծալքերից մեկում, ինչպես վաթսունամյա կինոժապավենը, որը կարող կատարի որևէ պահի բացվել խակական կյանքի օրերից մեկում, եթե մենք ոչչ մնայինք մինչև այդ օրը: Բայց դուք մենք կտեսնենք էկրանի վրա, ամբողջովին կանացած, հակայական մի դերեզմանոց, ուր ցանված են թանկագին սերմեր:

Թանկագին սերմեր, որոնք պիտի ծլեն:

ԳԼՈՒԽ VI

ՄԱՐԴԻԿ ԵՎ ՄԱՐՄՆԱՎՈՐՆԵՐ II

(Պատկերաց)

Բանուն երկու կյանք է վարում: Մեկն անցնում է վառ կամերաներում, խնամքով մեկուսացված ամբողջ աշխարհից և այնուամենայնիվ կապված նրա հետ ամենաուրտ կապով, որքան այլ վերաբերում է քաղաքական կալանավորներին: Մյուսն ընթանում է կամերաներից դուրս, երկար միջանցքներում, նեղ կամախաղի մեջ. դա ինքն իր մեջ պարփակված մի աշխարհ է, սրկված պաշտոնական պզեստի մեջ, ավելի մեկուսացված քան այն, որը վակված է կամերաներում, — բաղում մարմոնեաններ և փոքրաթիվ մարդկային էակների աշխարհը: Նրա մասին հենց ուզում եմ պատմել:

Այդ աշխատին ունի իր օրենքները և իր պատմությունը: Այստեղ ես չէի կարող ճանաչել այն ամենը խորությամբ: Ես կփոխանցի միայն դեպի դարձած դեկորացիան, միայն նրա մեկերեսը, արտաքուստ ամրողջական և հաստատուն, որը երկաթե լծով ճգմում է կամերաների բնակիչներին: Այստեղ էր մի տարի, նույնիսկ կես տարի առաջ: Այժմ մակերեսությը ակոսված է ճեղքերով, իսկ ճեղքերից երևում են դեմքեր — տղամարդ, մատաղնջ, ծխծաղելի, մի խոռքով ամենատյպային, բայց միշտ էությունն արտահայտող դեմքեր: Ճնշման ուժիմը դրշմ դրել է այդ մոայլ աշխատի բնակիչների վրա ես, ցցուն դարձնելով այն, ինչ հագիվ-հազ փոքր ինչ լուսավոր է ընդհանուր ֆոնից: Ամանք հագիվ նկատելի են, ուրիշները, մանիկ ծաղիկներ, նորեցան դեպքում, ավելի են աչքի զարկում. և նրանց մեջ կան զանազան տիպեր: Կարելի է դանել մինչև անգամ խակական մարդիկ: Ուրիշներին օգնելու համար նրանք չեն ապաում, մինչև իրենք բնկնեն ապատի մեջ:

Բանտը ուրախ հիմնարկներից չէ:

Բայց կամերանների դուռը աշխարհն ա-վելի մոտ է, քան կամերաներում: Կամերաներում ապրում է կոլեկտիվը, և ինչպիսի՛ կոլեկտիվ: Այդպիսիները առաջանում են ռազմաճակատում, երբ մարդկանց ապրումում է միշտական վտանգ, երբ այսօր ու կյանքը վրկում է ընկերդ, նա վաղը դու ես վրկում նրա կյանքը: Գոյություն ունեցող ռեժիմում պերմանոցի բանտապահների միջև բարեկամություն չի կարող լինել: Դա վերանում է: Նրանք ապրում են դավաճանության, լրտեսության, մատնությունների մթնոլորտում, յուրաքանչյուրը զգուշանում է իր պաշտոնակիցներից, որոնց պաշտոնապես կոչում է «կամարադ». նրանցից խուսափելով, որոնք չեն կարող և չեն ուզում ապրել առանց բարեկամների, փնտրում են նրանց... կամերաներում:

Մենք երկար ժամանակ չգիտեինք բանտապահների անունները: Բայց դա նշանակություն չուներ: Մեր մեջ մենք նրանց կոչում էինք այն մականուններով, որ տվել էինք նրանց մենք կամ մեր նախորդները և որոնք միշտ վոխանցվում են

ժառանգաբար: Մի քանիսը նույնքան մականուն ունեն, որքան կամերա կա բանտում. դրանք շոր պաշտոնյաներ են «ոչ ա՛յս է, ոչ ա՛յն» — այստեղ նա ճաշին մի բան ավելի կուտ, մյուս տեղը կհատցնի վզակոթին. և ա՛յս, և ա՛յն — պատահական փաստեր, բայց և այնպես նրանք երկար մնում են կամերայի հիշողության մեջ և առեղծում են միակրոմանի պատկերացում և միակրոմանի մականուն: Ոմանք առանում են միանման մականուն բոլոր կամերաններում: Դրանց մոտ բնավորությունը ցայտուն է արտահայտված: Ա՛յս է կամ ա՛յն: Լավ կամ վատ կողմը:

«Սամարացին»[1])

Բարձրահասակ, հասա մի մարդ, խոսում է բարակ ձենով. «Ս—Ս ուզեր-վխա» Ռեյսը, պերցյական պահակ ֆյոլենից: Ինչպես բոլոր ուսուցիչները զերմա-

---

[1]) Սամարացին—պիսյան նղբայր, առնուտար, (ծագել է պիսիրա սամարացուն վերաբերող ավետարանի առակից): (Ծանոթ. խմբ.):

նական դպրոցներում, անցել է առաջին օգնության կուրս և երբեմն վոխարինում է բանտային բուժակին: Նա առաջին բանտապահն էր, որի հետ պատել ծանոթացա: Նա էր, որ ինձ քարշ ավեց կամերա, նայեց վերքերը, կոմպրեսներ դրավ: Գուցե և երբ նա վրիժեց իմ կյանքը: Ինչին էր արտահայտվել դրանում. մա՞րդը, թե առնխտրական կուրսերը: Չգիտեմ: Բայց նրա մեջ արտահայտվում էր մերկապարանոց նայիլատը, երբ նա չարտառ ու վշտաբր էր անում հրեա կալանավորների առաջներն ու սոխրում էր կուլ տալ լինքը պատ ատ կամ շաքարավազ որպես ունկվերատոր մինչ բոլոր հիվանդությունների դեմ:

«Զաղացպանը»

Բարեխրատ, շատախոս մի տղա, բուդիմիկի գարնջրատրծարանի տայրպանը, Ֆարխան անունով: Նա կամերա էր մանում բոլոր ժուլերը երեսին, ուսելիք էր բերում կալանավորներին և երբեք չէր կռվում: Դժվար էր հավատալ, որ նա ժամերով կանգնում է դռան եռեռամ, ա-

կանչ դնելով կայանավորների խոսակցությանը և մեծավորներին հացնում ամենաչնչին մանրուքները:

Կակլատը

Նույնպես բանվոր և նույնպես բնակչություն պետականի պարբերատուծարանից: Այստեղ շատ կան դերմանացի բանվորներ Սաքսեաններից: «Բանն այն չէ, թե ավյալ մոմենտում ինչի մեջ է տեսնում իր նպատակն առանձին պրոլետարը կամ նույնիսկ ամբողջ պրոլետարիատը, — պրել է մի անգամ Մարքսը: — Բանն այն է, թե ինչ է պրոլետարիատը և թե նա, իր այդ կեցության համապատասխան, պատմական կանտրեն ինչ է հարկադրված անելու»: Այստեղացիները իրոք ոչինչ չզիտեն իրենց պատակարգի անելիքների մասին: Պոկված նրանից, հակադրված նրան, նրանք գտնվում են օբյեկտիվորեն կախված են օդում և հավանաբար պիտի կախվեն նաև բառիս բուն ստուգի իմաստով:

Նա եկել է դեպի նպիտակը ավելի հեշտ կյանք ունենալու համար: Բանն

ավելի բարդ դուրս եկավ, քան նա ենթադրում էր: Այն ժամանակ նա մոռացավ ծխածաղը: Նա գրազը դրել էր նացիզմի վրա: Պարզվեց, որ գրազը դրել է սատկած ձիու վրա: Այն ժամանակ նա կորցրեց ինքնատպարծությունը: Գիշերները վատուկ կոշիկներով անցուդարձ անելով մի-ջանցքներում, նա իր սխալը խոհերի հետքերը թողնում էր փոշոտ լուսամատնիների վրա.

— Ամեն ինչ անցավ, — բանաստեղծորեն գրում էր նա մատներով և խորհում ինքնատպանության մասին:

Ցերեկը նրանից բաժին էր հասնում թե՛ կատանոմորնեերին, թե՛ ծառայակից-ներին, նա բղավում էր, ճչում խզված ձայնով, որպեսզի այնքան էլ սոսկալի չլինի:

Ո Խ ս ս լ ե ր ը

Բարակ, երկար, կոպիտ բաստի, նա քչերից մեկն էր, որ ընդունակ է անկեղծորեն ծխծախել: Նա սեքսուալորեն բանվոր է Յարմանեցկից: Գալիս է կամերա և ժամերով վիճում:

— Ինչպե՛ս հասա մինչև այստեղ: Տաս տարի չէի աշխատում մարդամարդի: Իսկ չարաճճիական քսան կրոնով ընտանիք պահել, — ինքդ հասկանում ես, — մեծ ինչ կյանք է դա: Ել ահա դալիս են ուսում. մենք քեզ աշխատանք կտանք, եկ մեզ մոտ: Ես էլ գնացի: Դե՛ ինչ, աշխատանք տվին: Ինձ և մնացած բոլորին: Կուշտ ես՝ դլխով վրա կատար կա: Կարելի է ապրել: Սոցիալի՞զմ: Բարի՛, բայց չկա: Ես, իհարկե, ամեն ինչ այլ կերպ էի պատկերացնում: Բայց այսպես դոնե ավելի լավ է, քան առաջ:

— Ի՞նչ, պատերազմո՞ւմ: Ես պատերազմ չէի ուզում: Ես չէի ուզում, որ մարդիկ մեռնեն: Ես մյուսի ինքս ուզում եմ ապրել:

— Ես նրանց օգնում եմ: Էլ ի՞նչ է մնում ինձ անելու: Մի՞թե ես այստեղ գրեթե մեկին նեղացնում եմ: Կգնամ-կբան ուրիշները, ինձնից ավելի վատթար: Սրանով ես ոչ ոքի չե՞մ օգնում: Դե ինչ, պատերազմը վերջանա, կվերադառնամ գործարան...

— Ձո կարծիքո՞վ, ով է չահելու պատերազմը: Ո՞չ մեկը: Ուրեմն դո՞ւք: Իսկ ի՞նչ կլինի մեր բանը:

— Վե՞րջ: Ախա՛ս, ես կարծում էի, ուրիշ կերպ կվերջանա, — և նա հեռանում է կամերայից, քարշ տալով իր երկար ոտները:

Կես ժամից վերադառնում է և հարց տալիս, թե երբ ինչպես է ամեն ինչ կատարվում Սոֆեատկան Մխիթյան մեջ:

«Իբը»

Մի անգամ ուսմաստյան մենք նեղ-բևում, Պանկրացի գլխավոր միջանցքում տպատում էինք, որ մեզ ուղարկեն Պետհեկ պաշտոնը հարցաքննության: Մեզ միշտ կանդնեցնում էին երեսը դեպի պատը, որպեսզի չտեսնեինք, թե ինչ է կատարվում հետևում: Հանկարծ մեր թիկունքում հնչեց անծանոթ մի ձայն.

— Ոչինչ չեմ ուզում տեսնել, ոչինչ չեմ ուզում լսել: Դուք ինձ չի՛ք ճանաչում, բայց կճանաչեք:

Ծիծաղս եկավ: Այսպես տիրոջ խոսքն և անմխա մուշտրայի պատմածներում «Շվեյկի» մասին օրեր-երեսանոտ Դուբի խոսքերը շատ տեղին էին: Բայց մինչև

այժմ ոչ ոք միտք չէր տրել պատասխանել դրանք և լուռ սպասում էին: Ավելի վտանգավոր հարևանից բոլորը կարող էին ծեծ ստանալ և դժբախտության սխալից, հասկացնել տալով, որ լավ կլիներ դա տալած է լինելուն: Դա պատիժ չէր: Ամենևին ոչ:

Այդ խոսքերն ասողը ճգնավանքի մի պարտք էր, հանուրդ Հաճատով, որ դարձյալ անգամ չուներ Ելիկի մասին: Այդ պարտքը կատարում էր օրեր-ևեթ անհատ Դուբին, որովհետև ոչով պղպակվել էր նրան: Այդ մարդուկի անունը վիտան էր, մի ժամանակ ծառայել էր հեծելակային բանակում որպես վոխֆելդֆեբել: Պարտքը ճիշտ էր առում: Մենք իրոք նրան ճանաչեցինք և նրա մասին խոսում էինք միայն անտրուշ դեպանոնով, որպես առարկայի. «իքը»: Պետք է խոստովանել, մեր երևակայությունը սպասվում էր, դիպուկ մականուն որոնելով պանկրացյան ռեժիմի անկյունաքարը կազմող դաժանության և մուշարայի, բթամտության և տգիտելության այդ խառնուրդի համար:

«Մինչև խոճկորի պոչը», — ասում է

չեխական առածը նման մանր և անաւարծ կարիերիստների մասին. դա խափում է նրանց ամենապատրաստ տեղին: Մարդարքան հոգով չնչին պետք է լինի, որպեսզի տանջվի հասակի կարճության պատճառով: Իսկ վխտանն այրվում ու խորովում է ու դրա համար վրեժխնդիր է լինում բոլորից, ովքեր բարձր են իրենից ֆիզիկապես կամ հոգեպես, այսինքն կատարելապես ամեն ինչից և բոլորից:

Նա ոչ ոքի չի ծեծում: Զախրպանդ վախկոտ է դրա համար: Դրա փոխարեն նա լրտեսում է: Քանի՛ կալանավորներ իրենց առողջությամբ և կյանքով են վճարել Վխտանի մատնությունների պատճառով, — չէ՞ որ մինեանը չէ, թե ինչ բնութագրով են ուղարկում քեզ Պանկրացից համակենտրոնացման ճամբարը, և արդյոք կուղարկե՞ն առհասարակ:

Նա շատ ծիծաղելի է: Երբ մենակ է միջանցքում, ներկայանում է հանդիսավոր և մեծախարխ ու ինքն իրեն երևակայում ըստ ամենայնի նշանավոր անձ: Բայց հենց որ պատահում է մեկին, իսկույն պահանջ է զգում իր հասակն ընկարագնել: Եթե նա ձեզ մի բան է հարցնում,

անպատման նստում է ճամփի վրա և այդ անհարմար դիրքում ընդունակ է նստել մի ամբողջ ժամ միայն նրա համար, որ մի ամբողջ գլխով բարձր լինի ձեղնից: Եթե նա ներկա է գտնվում ասիրելու ժամանակ, ապա կանգնում է աստիճանի վրա կամ թե բարձրանում նստարանին և բարբառում իր մշտական՝

— Ոչինչ չեմ ուզում անելու, ոչինչ չեմ ուզում լսել: Դուք ինձ չե՛ք ճանաչում...

Ստամոսյան պրոտոնքի ժամանակ նա ճեմում է մարզադեմի վրա, որով նրա հասակը բարձրանում է տաս սանտիմետրով: Կամերա է մտնում փքված, ինչպես արքայական տոհմի շառավիղ և իսկույն բարձրանում տարեսեռի վրա, որպեսզի առուգումը կատարի վերևի յարուսից:

Նա շատ ծիծաղելի է, բայց որպես իշխանուհի յամբ օժտված ամեն մի տրխմար, որից կախված է մարդկային կյանքը, նա բացի այդ, շատ վտանգավոր է նաև: Իր սահմանափակության նա ընդունակ է յուն ուղտ դարձնել: Նա ոչինչ չդիտե, բացի պահապան շան պարտականությունից, ուստի և հրահանգված կար-

դուխանսկից եղած ամեն մի, նույնիսկ աննշան չեզման մեջ նա տեսնում է ինչ-որ արտասովոր կարևոր բան, համոզված իր մխիթարի կարևորության:
Նա հետաքրքրություններ և հանգստություններ ամամանված կարգապահության դեմ, որտեղի հանդիսա քին ոչ մի մարդ, թե ինքն էլ ոչ մի բան նշանակում է: Իսկ ո՞վ է առաքելու, որքան ճշմարտություն կա նրա զեկույցներում:

Ամեռացը

Հոլմի հրան, բուժ դեմք, անխոնա հայացքը — Գրասի[1] կենդանի ծաղրանկարներից մեկը, որոնք պատկերում են նոյեմբերյան «տերության»: Նա եղել է կով կիթող Լիսովի ամամանների մոտ, բայց ինչքան էլ աշխատասեր լինի, հետևյալ կենդանին նրա միտ չի դրծել ոչ մի ազնվացնող ազդեցություն: Մեծավորների աչքում նա համարվում է «գերմանական առաքինությունների» մարմնացում. նա

---

1 Գեորգ Գրոսս- գերմանացի ծաղրանկարիչ (Մանոթ. խմբ.):

վճռական է, հատուցումը, անկաշառ (բերից մեկն է, որ միջանգամտանների ուսուցիչ էի կոչում) բայց...

Ինչ որ վերմանոցի դիտանական, շեմ հիշում, ով, մի ժամանակ հետազոտել է կենդանիների համագականությունը, հաշվելով այն «բառերը» որ նրանք ընդունակ են հասկանալու: Ըստ որում կարծեմ, պետք է, որ ամենամեծ համագականությանը անասունն կառուն է, որը կարող է հասկանալ մինչև 128 «բառ»: Այսպես ուրեմն նա հանճար է համեմատած Սմեռանի հետ, որի բերանից Պանկրացի բանը լսել է միայն չորս բառ.

— Pass bloss auf, Mensch! [1]

Նա սոխակած էր լինում շարժել երկու-երեք անգամ հանձնել հերթապահությունը և, ամեն անգամ նա սարսափելի վնչում էր, և ոչնամանալով զրծը անպատճան վատ էր վերջանում: Մի անգամ բանտի վերատեսուչը բարկացավ նրա վրա այն բանի համար, որ պատուհանները փակ են, և հրամայեց բանալ: Մայլերը մի պահ չիմիտությունից երեսից

[1] Մի կողմ քաշվի՛ր, մարդ (գերմ.):

իր կարճ ոտքերի վրա, բուժ հայացքը սևեռած գետնին, շրթունքները ղրաձղոր-բեն ծամածռելին, գոռը ճղնելով կրկնել այն, ինչ լսել էին ականջները... և հանկարծ յեռը մոնչաց չչակի նման... բոլոր մկնդքներում սրբեց չվոթ և խառնակութեան, ոչ ոք ոչինչ հկարողացավ հասկանալ և պատուհաններն այնպես էլ փակ մնացին, խակ պատմմամբ Սմեառնակ ճանկն ընկած երկու կապանավորի քթից պրտան եկավ: Ելքը գտնված էր:

Սոխորական ելքը: Ծեծել, ծեծել ամեն գնդքում, խակ ելնե հարկավոր է, — ասա և ոտանել, — այլ նա հակառակ էր: Եվ մխայն այլ: Մի անդամ նա մտավ բնդհանուր կամերան և խրեց կապանավորներից մեկին. կապանավորը, լինելով հիվանդ մարդ, ընկավ հատակին չդաւթյան մեջ, բայց մյուսները պետք է պահեին ու բարձրանային համաչափ նրա չդաւմաններին, մինչև որ հիվանդը հանդարտվեց: Խակ Սմեառնաը, ձեռքերը հենած կողքերին ապուշային ժպտով, դոհունակութեամբ դիտում և ուրախանում էր. ինչ հայոց վճռեց բուն կացութեանը:

Պրեմիտիվ էակ, որը այն բոլորից, ինչ նրան տվարբերել էին, հիշում էր միայն մի բան. կարելի է ծեծել:

Բայց և այնպես նուենիկ այդպիսի մի տարածքի մեջ ինչ-որ բան բեկվեց: Այդ տեղի ունեցավ մոտավորապես մի ամիս առաջ: Բանտի պրատեկցիայում եկուսով նստել էին՝ Սմեռոնը և կ–ն: կ–ն պատմում էր քաղաքական դրության մասին: Շատ երկար հարկ եղավ խոսել, մինչև որ Սմեռոնը թեկուզ մի վարկ սկսեց դրան ընկնել հարցի վերաբերյալ: Նա վեր կացավ, բացեց պրատեկցիայի դուռը, ուշադիր գննեց միջանցքը. ամենուրեք լուծյուն, պիշեր, բանտը քնած է: Փակեց և խնամքով կողպեց դուռը, հետո դանդաղ ընկավ աթոռին.

— Այդպե՞ս, կարծո՞ւմ ես...

Գլուխը հենեց ձեռքերին: Հուժկու մարմնի մեջ ապրող տխեղծ հոգու վրա ճնշում էր անասելի ծանրություն: Նա երկար նստեց այդ դիրքով: Հետո բարձրացրեց գլուխը և ասաց ընկճված.

— Պետք է որ այդպես լինի: Մենք չենք չահի...

Արդեն մի ամիս է, ինչ Պանկրացը չի

յառ Սմեռնոի ռադիոչուն գոտիոտը: Եվ նոր կարոտմունքը չդևաւն, ինչքան ծանր է նրա ձեռքը:

— — — —

նա արդեն վարժ է և արդեն նախընտրական ագիտատոր էր մասնագետ ծառայությունների համար ստացել է հիմնական պաշտոնը: Նա կառչում է դրանից բոլոր ուժերով ու երևան բերելով լիակատար անզգայություն, չի խնայում ոչ ոքի. ո՛չ կուսակիցներին, ո՛չ ծառայողներին, ո՛չ մանուկներին, ո՛չ ծերերին: Պանկրացի նպատակները մոտիկ չեն միմյանց հետ, բայց Սոտրան այս կողմից դերասանցում է բոլորին: Միակ մարդը, որին նա լուռ երևույթին դնահատում է և մյուսներից ավելի համակրանքն է արժանացնում արույցի, — բանաստեղծ բուժակ, ասիկանական Ֆերդֆերել Վայանեն է: Բայց, կարծես, Վայանեը վոխադարձ սեր չի տածում դեպի նա:

Նա սեանում է միայն երեն: Հանուն անձնական օգտի, նա ձեռք է բերել իր պաշտոնը, իր անձնական օգտի համար նա համաձայնում կռնա նպատակին միևչև վերջին բոպեն: Թեպետ, միայն նա չի մտածում փրկության ոչնչ ելքի մասին: Նա հասկանում է, որ ելք չկա: Նպատակի անկումը նշանակում է և իր անկումը, իր բարեբախտության վերջը, իր հոյակապ

բնակարանի և փաթեթատուփ տեսքի վերջը (ի մեջի այլոց, նա բնավ չի խորշում ստահակաժի ենթարկիվածք չեխերի հպատակությից):

Վերջ: Ա.յո՛:

Բանտային բուժակը

